ը/46016-20

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 17/1143

«12» 10 2020թ. ք.Երևան

### ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ, ՎԹԱՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿԱՆՉԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ի №17/1584 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածով և Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) 2020 թվականի հունվարի 13-ի թիվ 23-Լ հրամանով հաստատված Փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) կանոնադրության 20-րդ կետի 5-րդ ենթակետով.

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

1. Հաստատել՝

1) ԱԻՆ ՓԾ ստորաբաժանումների ուժերն ու միջոցները հրդեհաշիջման և վթարափրկարարական աշխատանքներին ներգրավման կարգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Երևան քաղաքում և հարակից մարզերի համայքներում կենցաղային կանչերի վթարափրկարարական աշխատանքների սպասարկման տարածքները՝ համաձայն հավելված 2-ի.

3) ԱԻՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի կողմից հրդեհների և կենցաղային կանչերի սպասարկման տարածքները՝ համաձայն հավելված 3-ի.

4) ԱԻՆ ՓԾ ստորաբաժանումների սպասարկման տարածքների քարտեզները՝ համաձայն հավելված 4-ի:

2. Տավուշի մարզի քաղաքային որոնողափրկարարական և ճառագայթային, քիմիական և կենսաբանական արձագանքման թիմերի սպասարկման տարածք համարել Տավուշի և Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները:

3. Սյունիքի մարզի քաղաքային որոնողափրկարարական և ճառագայթային, քիմիական և կենսաբանական արձագանքման թիմերի սպասարկման տարածք համարել Սյունիքի և Վայոց ձորի մարզերի վարչական տարածքները:

4. Շիրակի մարզի քաղաքային որոնողափրկարարական և ճառագայթային, քիմիական և կենսաբանական արձագանքման թիմերի սպասարկման տարածք համարել Շիրակի մարզի վարչական տարածքը:

5. Լոռու մարզի քաղաքային որոնողափրկարարական և ճառագայթային, քիմիական և կենսաբանական արձագանքման թիմերի սպասարկման տարածք համարել Լոռու մարզի վարչական տարածքը:

6. ՓԾ փրկարարական ուժերի վարչության (այսուհետ՝ ՓՈՒՎ) հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի (այսուհետ՝ ՀՆՓԱԻԿ) արձագանքման խմբի (այսուհետ՝ ԱԽ) սպասարկման տարածք համարել Երևան քաղաքի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի և Արմավիրի մարզերի վարչական տարածքները, ինչպես նաև ՀՀ տարածքը՝ առանձին բարդության դեպքերում:

7. ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) հատուկ ջրափրկարարական ջոկատի սպասարկման տարածք համարել Սևանա լիճը և առանձին բարդության դեպքերում՝ ՀՀ տարածքում առկա ջրային տարածքները:

8. ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱՒԿ կինոլոգիական ջոկատի սպասարկման տարածք համարել ՀՀ տարածքը:

9. ՓԾ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի մոնիտորինգի բաժնի սպասարկման տարածք համարել համարել Երևան քաղաքի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի և Արմավիրի մարզերի վարչական տարածքները, ինչպես նաև ՀՀ տարածքը՝ առանձին բարդության դեպքերում:

10. ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի սպասարկման տարածք համարել Երևան քաղաքը և հարակից մարզերը (մինչև 30 կմ շառավղով հեռավորության վրա):

11. Ուժը կորցրած ճանաչել՝ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումների ուժերն ու միջոցները հրդեհաշիջման, վթարափրկարարական աշխատանքներին և կենցաղային կանչերին ներգրավման կարգը հաստատելու մասին» №17/1584 հրամանը:

12. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

10.10.2020

X

ՎՐԵԺ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Signed by: GABRIELYAN VREZH 2001520131

Փ/Ծ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ